ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անուն, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Կարեն Ալավերդյան, ՀՀ ֆինանսների նախարարության հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման, հաշվետվությունների մշտադիտարկման վարչության պետ

2. Գործուղման վայրը և ժամկետները

ք. Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն), 2023 թվականի սեպտեմբերի 27-30-ը

3. Հրավիրող կողմը

Ռուսաստանի Դաշնության ֆինանսների նախարարություն

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն Մոսկովյան ֆինանսական ֆորումին:

5. Քննարկված թեմաները

- Նոր հավասարակշռության փնտրտուքներում. Ռուսական ֆինանսատնտեսական համակարգը համաշխարհային վերափոխումների ժամանակաշրջանում,
- Երկար փողեր. խնայողություններ ու ներդրումներ,
- Ֆինանսական գրագիտությունից դեպի ֆինանսական մշակույթ: Ռազմավարություն 2030
- Տարածաշրջանային ֆինանսների զարգացման հետագիծն արդի իրականությունում,
- Ռուսաստանի Դաշնության բյուջետային օրենսգրքի 25 ամյակ. ռեսուրսների բաշխումից մինչև արդյունքների կառավարում,
- Բյուջեի ծախսերի արդյունավետության և արդյունավետության բարձրացման գործիքների կիրառման առանձնահատկությունները,
- Հանրային սեփականության արդյունավետ կառավարում,
- Պետական ֆինանսների կառավարման թվայնացման արդի միտումներն ու առանձնահատկությունները:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Ֆորումի ընթացքում ներկայացվել է «ՀՀ հարկաբյուջետային քաղաքականության ժամանակակից համակարգը և գործիքները» թեմայով զեկույցը, որի նվիրված էր ՀՀ ֆինանսների նախարարությունում հարկաբյուջետային քաղաքականության վերլուծության և կանխատեսման համակարգի և գործիքների նկարագրությանը, ինչպես նաև ՀՀ կառավարության պարտքի կայունության և հարկաբյուջետային կանոնների վերաբերյալ ՀՀ ՖՆ կողմից իրականացված հետազոտական աշխատանքների արդյունքներին: Ելույթից հետո ծավալվել է քննարկում վերոնշյալ հարցերի վերաբերյալ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Միջոցառման ընթացքում երկկողմ հանդիպումներ են տեղի ունեցել Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի գործադիր տնօրեն Ա. Շիրոկովի, Ուզբեկստանի ֆինանսների նախարարի տեղակալ Ա. Խադարովի գլխավորած պատվիրակության, ինչպես նաև ՌԴ ֆինանսների նախարարության գիտահետազոտական ֆինանսական ինստիտուտի (НИФИ) գործընկերների հետ, որոնց ընթացքում քննարկվել են երկկողմ հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Առկա չեն

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Հոկտեմբերի 4, 2023թ.

Recoverable Signature

X

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ԿԱՐԵՆ

Signed by: ALAVERDYAN KAREN 2602830070